



## ՄԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԵՎՐՈՊԱՅԻ ՆԵՐԳՐԱՎԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂՈՒՄ

**Մենք կոչ ենք անում Եվրամիությանը ներգրավվել Լեռնային Ղարաբաղում և օգնություն տրամադրել ԼՂ-ի ժողովրդին:**

Լեռնային Ղարաբաղը 150,000 բնակչությամբ ցամաքով շրջապատված լեռնային մի տարածք է Հարավային Կովկասում: ԼՂ-ն չճանաչված այն երկրներից մեկն է, որոնք ձևավորվել են 1991թ.-ի Խորհրդային Միության փլուզումից հետո: Այն Եվրոպայի ամենաանբարենպաստ տարածքներից մեկն է:

Այս փոքր տարածքի բնակիչները շրջափակման մեջ են գտնվում ավելի քան 20 տարի: Ադրբեջանի Հանրապետությունը, համարելով, որ այս տարածքը իր իշխանությունը տակ է գտնվում, փորձում է մեկուսացնել այն արտաքին աշխարհից: Սա զգալի դժվարությունների պատճառ է դարձել:

Այս տարածքն աշխարհում ականապայթյունների ամենաբարձր ցուցանիշներից մեկն ունի: Խաղաղ բնակիչներ՝ հիմնականում երեխաներ և ֆերմերներ, ամեն տարի հակահետեւակային ականապայթյունների զոհ են դառնում: Halo Trust-ը միակ միջազգային հասարակական կազմակերպությունն է, որ գործում է այդ տարածքում, բայց չունի հանրային ֆինանսավորում մնացած տարածքները ականազերծելու համար:

**Անվտանգությունը մեծ խնդիր է** սահմանի մեծ մասում ճակատային գծերի առկայության և Ադրբեջանի հետ մշտական ընդհարումների պատճառով: Սահմանային բախումների ժամանակ վայրագություններ են տեղի ունեցել, բայց չկան միջազգային դիտորդներ կամ ՀԿ-ներ, որ հետաքննություն անցկացնեն:

Նավթով հարուստ Ադրբեջանը զգալի ջանքեր է գործադրում և ֆինանսական միջոցներ ներդնում, որպեսզի օտարերկրյա քաղաքական առաջնորդները, պաշտոնյաները, լրագրողները և օգնություն տրամադրող կազմակերպությունները հեռու մնան այդ տարածքից: Եվրամիությունը, Ադրբեջանի պահանջով, նույնպես հեռու է մնում Լեռնային Ղարաբաղից: Վերջին 20 տարիների ընթացքում ոչ մի ԵՄ պաշտոնյա չի այցելել Լեռնային Ղարաբաղ, և ԵՄ-ն որեւէ օգնություն չի ցուցաբերել ԼՂ-ի ժողովրդին:

**Լեռնային Ղարաբաղի մեկուսացումը եզակի է:** ԵՄ-ն 150 երկրների օգնություն է տրամադրում: ԵՄ-ն նաև օգնություն է տրամադրում բազմաթիվ չճանաչված երկրների՝ Աբխազիայի, Տրանսնիստրիայի և Հյուսիսային Կիպրոսի ժողովուրդներին անկախ նրանց կարգավիճակից: Այս քաղաքականությունը

Sign the petition at: [www.change.org](http://www.change.org)  
Find out more about the campaign and what you can do to help at:  
[www.agbueurope.eu](http://www.agbueurope.eu)  
Email: [4EUinKarabakh@agbueurope.eu](mailto:4EUinKarabakh@agbueurope.eu)



կոչվում է «ներգրավվածություն առանց ճանաչման»:

Մենք կոչ ենք անում Եվրամիությանը ներգրավվել Լեռնային Ղարաբաղում և սատարել ԼՂ-ի բնակչության կենսամակարդակի բարելավվման ուղղված նախագծերը, քանի որ **Եվրամիության քաղաքականությունը պետք է նպաստի Եվրոպայի և նրա հարևանությունում ապրող բնակչության բարեկեցությանը:**

Մենք նաև կոչ ենք անում Եվրամիությանը ներգրավվել Լեռնային Ղարաբաղում, քանի որ ԵՄ-ն **պետք է ապահովի իր ներկայությունը և նպաստի խաղաղությանը, երբ հակամարտությունը սրվի իր սահմանների մոտ :**

Sign the petition at: [www.change.org](http://www.change.org)  
Find out more about the campaign and what you can do to help at:  
[www.agbueurope.eu](http://www.agbueurope.eu)  
Email: [4EUinKarabakh@agbueurope.eu](mailto:4EUinKarabakh@agbueurope.eu)

